

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության ֆիզիկական դաստիարակության կազմակերպության միջև սպորտի բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը և Իրանի Իսլամական Հանրապետության ֆիզիկական դաստիարակության կազմակերպությունը (այսուհետ՝ Կողմեր),

ձգտելով զարգացնել համագործակցությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի բնագավառում, որպես երկու պետությունների միջև բարեկամական հարաբերությունների զարգացման և ամրապնդման կարևոր և անհրաժեշտ տարր, համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը համաձայնում են՝ սույն Փոխընդման Հուշագրին և իրենց պետությունների օրենսդրությանը համապատասխան, համագործակցություն իրականացնել ֆիզիկական դաստիարակության և սպորտի բնագավառում:

Հոդված 2

Կողմերը միմյանց կտրամադրեն անհրաժեշտ միջոցներ տեղեկատվության, մարզական-սպորտային և գիտական փորձի փոխանակման համար:

Հոդված 3

Կողմերը կխրախուսեն մասնագետների, բժիշկների և սպորտային մասնագետների մասնակցությունը գիտական սեմինարներին և ֆիզիկական դաստիարակությանն առնչվող, սպորտը բոլորի համար և սպորտային բժշկության թեմաներով խորհրդաժողովներին:

Հոդված 4

Կողմերը կանցկացնեն համատեղ քննարկումներ համագործակցության ընդլայնման, սպորտային նվաճումների արդյունքների հարցերի շուրջ, ինչպես նաև կհամագործակցեն միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

Հոդված 5

Կողմերը կաջակցեն միմյանց կապ հաստատելու մարզական լրատվության, ռադիոյի, հեռուստատեսության և մարզական հրապարակումների միջոցով՝ իրենց երկրներում ֆիզիկական դաստիարակության և սպորտի զարգացման նվաճումներին հասարակությանը ծանոթացնելու նպատակով:

Հոդված 6

Կողմերը կխրախուսեն թիմերի, մարզիկների, մասնագետների, մրցավարների փոխանակումները: Այդ փոխանակումները կիրականացվեն դրանց վերաբերյալ Կողմերի պետությունների ազգային ֆեդերացիաների, միությունների, ընկերությունների, ակումբների և այլ սպորտային հաստատությունների միջև հաստատված ծրագրերին համապատասխան, որոնցում կսահմանվեն փոխանակումների կարգը, ժամկետներն ու ֆինանսական ապահովման պայմանները:

Հոդված 7

Գործուղող Կողմը իր սպորտային կազմակերպությունների և ազգային ֆեդերացիաների միջոցով կհոգա պատվիրակության մեկնման և վերադարձի տոմսերի ծախսերը մինչև ընդունող Կողմի պետության մայրաքաղաք կամ նախօրոք համաձայնեցված որևէ այլ քաղաք: Հյուրընկալող Կողմը կհոգա տեղավորման, սննդի և ներքին տրանսպորտի ծախսերը: Մնացած հարցերը կկարգավորվեն փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 8

Սույն Փոխըմբռնման Հուշագրի կիրառման կամ մեկնաբանման ընթացքում Կողմերի միջև ծագած տարաձայնությունները կլուծվեն խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 9

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Փոխըմբռնման Հուշագրում կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրությամբ: Նշված արձանագրությունն ուժի մեջ կմտնի սույն Փոխըմբռնման Հուշագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և կհանդիսանա սույն Փոխըմբռնման Հուշագրի անբաժանելի մասը:

Հոդված 10

Սույն Փոխըմբռնման Հուշագրին ուժի մեջ կմտնի դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ազգային օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով վերջին ծանուցումը ստանալու օրվանից և կգործի 5 տարի ժամկետով:

Փոխըմբռնման Հուշագրի ժամկետը կարող է երկարաձգվել հաջորդ հինգ (5) տարիների համար, եթե Կողմերից որևէ մեկը գրավոր չծանուցի մյուս Կողմին դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին սույն Փոխըմբռնման Հուշագրի ավարտից 6 ամիս առաջ:

Հոդված 11

Սույն Փոխըմբռնման Հուշագրի գործողության դադարեցումը չի ազդի սույն Փոխըմբռնման Հուշագրի գործողության ժամանակ սկսված ծրագրերի և նախագծերի կատարման ընթացքի վրա, եթե Կողմերն այլ բան չպայմանավորվեն:

Կատարված է Երևան քաղաքում, 2007թվականի օգոստոսի 20-ին, երկու բնօրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն, պարսկերեն, անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Փոխըմբռնման Հուշագրի կատարման ընթացքում դրա դրույթների մեկնաբանման առնչությամբ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվու թյունը կտրվի անգլերեն տեքստին: